ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղամաս, Պուրակային 32, Հեռ. (+374 223) 7 30 03, էլ. փոստ hrazdanibk@mail.ru

11.06.24 N 276

Որոշում N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0301-7

,,Լինարե Մեդ,,ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերավերյալ

2023 թվականի դեկտեմբերի 13-ին ,,Հրազդան բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ,, Լաբորատոր ախտորոշիչ նյութերի,, ձեռք բերման նպատակով ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0301 ծածկագրով մրցույթ: Մրցույթին հայտ է ներկայացրել և 28-րդ, 89-րդ, 43-րդ, 44-րդ, 53-րդ, 54-րդ, 57-րդ, 58-րդ, 61-րդ, 75-րդ, 84-րդ, 52-րդ, չափաբաժիններով ընտրված մասնակից է համարվել ,,Լինարե Մեդ,, ՍՊԸ-ն, որի հետ էլ 10.01.2024 թվականին կնքվել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0301-7 պայմանագիր:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի ,,Լինարե Մեդ,, ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերում՝ 20.12.2023 թվական և 15.02.2024 թվական 100% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Շողիկ Հրաչիկի Թունյանը: 15 դեկտեմբեր 2023թ. ,,Լինարե Մեդ,, ՍՊԸ տնօրեն է հանդիսանում Արթուր Ռոբերտի Շեգունցը: Ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցի և ,,Լիարե,,ՍՊԸ-ի, որը 23 դեկտեմբեր 2023թ-ից մինչև 23 դեկտեմբեր 2025թ. ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, միջև առկա է փոխկապակվածություն, մասնավորապես ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցը հանդիսանում է նաև ,,Լիարե,,ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր:

1. Հիմնավորում և եզրահանգում

Համաձայն ,,Գնումների մասին,,ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-ի ա/ ենթակետի, ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի թիվ 526-ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետի, հրավերի 8.14 կետի, ,,Հրազդան բժշկական կենտրոն,,ՓԲԸ-ն հրաժարվել է պայմանագրից, համարելով այն միակողմանի լուծված:

,,Գնումների մասին,, օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե

ա/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են , եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի խախագահ, անդամ

ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 121-րդ կետի համաձայն

ա. Մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ ,,Լինարե Մեդ,, ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝ Լ.Նավասարդյան

☎ (077)-44-81-41